

Տգրուկը (սիւլիւկ), ինչպէս յայտնի է, փոքր երկայն կենդանի մըն է, որուն երկու ծայրերն ալ տափակ են: Լկյա ծայրերէն մէկը՝ որ բարակ է, բերանն է, որով կը ծծէ արիւնը: Ասիկա կարեւոր է գիտնալ, որովհետեւ ա՛յս կողմն է որ պիտի փակցուի պէտք եղած տեղը:

Տգրուկը դնելու համար պէտք է նախապէս հիւանդին արիւն առնուելիք մասը եռացած ջուրով ու օճառով լուալ: Եթէ այնտեղ մազ բուսած է, պէտք է անիլել: Օճառի հետքը բոլորովին անհետացնելու է, նոյն տեղը նորէն լուալու է եռացած ջուրով: Յետոյ նոյն ջուրը թաթխած բամպակով քիչ մը չփելու է, որպէսզի կարմրի: Ասկէ ետք տգրուկը մաքուր պաստառով մը սրբելով փոքրիկ գաւաթի մը մէջ կը դրուի, և զայն պէտք եղած տեղին վրայ գլխովայր կը դարձուի:

Եթէ տգրուկ փակցուելիք տեղը շատ նեղ է, այն ատեն տգրուկը ապակիէ նեղ խողովակի մը մէջ կը դրուի, կամ մաքուր բարակ խաւաքարտէ ձագար մը շինելով մէջը կը դրուի, և պէտք եղած տեղը կը փակցուի:

Տգրուկի մը ծծելը՝ 3 քառսրդ ժամէն մինչև երկու ժամ կը տեւէ: Միջին հասակով տգրուկ մը 15 կրամ արիւն կը ծծէ. բայց տգրուկին իյնալէն վերջ՝ արիւնը կը շարունակուի հոսիլ դեռ երկար ժամանակ: Այս արիւնը դադրեցնելու համար մաքուր պաստառով մը ամուր մը կը փաթթեն վերքը:

Տգրուկները երբ յագեան, ինքնիրեննին կ'իյնան. իսկ երբոր չիյնան, այն ատեն վրանին հասարակ աղ ցանելու է, որպէսզի խածածին թողուն:

Տգրուկին փակցուած տեղը ճերմակ սպի մը կը մնայ. ուստի՝ պէտք չէ դէմքին կամ թեւերուն վրայ տգրուկ դնել:

Տգրուկը փակցնելէ ետք վրան հոկելու է, որպէսզի չտեղափոխուի և մարմնին ծակերէն մէկուն մէջ չփախի: Փակցուելիք տեղերն են՝ սրբանի բոլորտիքը, ականջի ետին (հայերէն ականջթոռք), զիստերուն ներքին կողմը, եւայլն:

Հաւաքեց՝ Կ. Յ. ԲԱՍՄԱՋԵԱՆ

ՄԵՂՈՒՆԵՐՄԻՆ ԹՈՅՆԸ ... ԴԵՂ. — Փորձով տեսնուած էր, որ մեղուներուն կողմէ խայթուած մարդոց յօդացաւը կ'անհետանար: Վերջերս գերմանական հաստատութիւն մը մեղուներու թոյնէն պատրաստած է դեղ մը, ափիքողան, յստակ հեղուկ մը, թթու եւ լեղի, որ ներարկուելով կը փարատէ, կ'ըսուի, ջղացաւերն ու յօդացաւերը: